ՆՈՐ-ԴԱՐ

№ 200 ՏԱՄՆԵԻԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հ̇արաթ 11 Նոյեմբերի 1895 Հ̇արաթ 11 Նոյեմբերի ՏԱՄՆԵԻԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 200

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների գնան 2 կ., բնկլամների համար կրկնապատիկ,

Առաջիկայ 1896 թուականի համար բացուած է „Նոր-Դար“-ի բաժանորդագրութիւնը: Ծրագրի մանրամասնութիւնը կրհրատարակուի առաջիկայ համարում:

Առաջիկայ տարուայ համար՝ նոր տառեր ևնք ձուլել տալիս իւր բոլոր պարագաներով:

„Նոր-Դար“-ը կունենայ նշանաւոր կեդրոնական թղթակիցներ:

Առաջիկայ տարին „Նոր-Դար“-ն աւելի հարուստ կլինի իւր բովանդակութեամբ:

Եթէ սովորականից աւելի բաժանորդներ ունենայ „Նոր-Դար“-ը շաբաթը 6 անգամ կհրատարակուի:

„Նոր-Դար“-ն ինչպէս միշտ օրս, այնուհետև էլ բոլոր թերթերից աւելի շատ համար կրտայ իւր բաժանորդներին:

ՍԱՄՍԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, ԱԼԷՔՍԱՆԴՐ ՍԱՐԳՍԵԱՆ, ԵՂԻՍԱԲԷԹ ՆՈՒՒԻԵԱՆ, ԳԷՈՐԳ, ԲԱԳՐԱՏ և ԱՐՇԱԿ ՍԱՐԳՍԵԱՆ ԲԱԲԵԱՆ ՆԵՐԸ, յայտնելով

ՄԱՐԻԱ ԱԼԷՔՍԱՆԴՐԵԱՆ ԲԱԲԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ սոյն նոյեմբերի 10-ին, խնդրում են ազգականներին և ծանօթներին շնորհ բերել յուղարկաւորութեանը: Մարմինը դուրս կբերուի կիրակի, նոյեմբերի 12-ին, առաւօտեան ժամը 11-ին, սեպհական տնից (Пескомойская փող., սեփ. տ. № 19) և կըտանուի Սուրբ Կարապետ եկեղեցին: Ամբիծքը շաբաթ, երեկոյեան ժամը 6-ին: Թաղումը Խոջիվանքի գերեզմանատանը: (704) 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ
Շաբաթ, նոյեմբերի 11-ին
ԿՈՆՑԵՐՏ
ՌԵԴԵՐ ՔՈՅՐԵՐԻ
ՐՈՋԱԼԻԱ—փորթեպիանօ, ՍՈՓԻԱ—ջութակ, ԼՕԼԼԱ,—ալտօ, ՀԻՄԻԼԻԱ—վիօլօնչել,
Տոմսակները 4, 3, 2, 1,50 և 1 ր.: Կարելի է ստանալ Ք. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ երաժշտական դէպօյում, Դվորցովայա փողոց:
(710) 3—3

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Վերջին հեռագիրները:
Յատուկ հեռագրներ Էրզրումի կոտորածի մասին:
Ընդհանուր քաղաքական կացութիւն:
Եւրոպական պետութիւնները և Թիւրքիան:
Աւերածութեան հետևանքները Փոքր-Ասիայում:
Կրկին կոտորածներ Փոքր-Ասիայում:
Երկու ծայրայեղ հայեացքներ:
Բ ր ո ն ի կ ո ն.—Վեհափառի յանձնարարական: Էջմիածնի միաբանների մի որոշումն: Կարնոյ առաջնորդի նամակը: Վեհափառի դիտաւորութիւնը: Բենիկ վարդապետ: Կարսի յայտը: Էջմիածնի վանքի և ճեմարանի բժիշկ Ս. Էջմիածնից: Ալէքսանդրապոլից: Դուչեթից: Նուխուց: Սարիղամիշից: Մայկոփից: Արխալուց: Դեռաբէկից: Հայի դինը: Մղալոբլիչվիլու գտնուիլը:
Թ ղ թ ա կ ց ու թ իւ ն ն ե ր.— Նամակ Ամերիկայից—Բոստոն: Նամակ Ֆրանսիայից—Պարիզ:
Ք ա ղ ա ք ա կ ա ն.— Ցունաստան և Թիւրքիան:
Հ ե ռ ա գ ր ն ե ր:
Թ ե ր և դ ե մ:
Տ ե ղ ե կ ա տ ո ւ:
Յ ա յ տ ա ր ա ր ո ւ թ իւ ն ն ե ր:

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳՐՆԵՐ

—

«Ռուս. գործակալութեան» միջոցով մենք ստացանք հետևեալ հեռագրները:

ԼՈՆԴՈՆ, 9 Նոյեմբերի.—Բրյուսելում Սոլսբըրիին մի ճառ խօսեց, որի մէջ հաղորդեց սուլթանի մի նամակի բովանդակութիւնը, որ սուլթանը գրել է իրեն պատասխան Սոլսբըրիի Գիլդհոլում խօսած ճառի մէջ յայտնած կասկածին Թիւրքիայում ռեֆորմներն իրագործելու վերաբերմամբ: Սուլթանը գրում է, որ այդ կասկածներն իրեն խիստ նեղացրել են. ռեֆորմների իրագործումը վճռուած բան է, և նա, սուլթանը, կամենում է այդ ռեֆորմներն իրագործել կարելոյն չափ շուտով: Իւր մինիստրներին սուլթանը յայտարարել է, թէ սուլթանի բարի դիտաւորութիւնների մասին Սոլսբըրիի արտայայտած կասկածները ոչ այլ կերպ չի կարելի բացատրել, քան այն բանով որ խարդաւանքներ են լարուած: Սուլթանը կրկնել է. «Ես կըմտցնեմ ռեֆորմները և անձամբ կըվերահսկեմ, որ իւրաքանչիւր յօդուածը գործադրուի»: Սոլսբըրին այդ է նկատի է առել մի ուրիշ ճառ է խօսել, որ համապատասխանում է իւր դէպի Թիւրքիան տածած բարեկամական զգացումներին: Սուլթանն անհամբերութեամբ սպասում է իր նամակի հետևանքին. Սոլսբըրին յայտարարեց, որ, հնազանդուելով քաղաքավարութեան զգացմանը, ինքը հաղորդեց նամակի բովանդակութիւնը իւր ունկընդիրներին, բայց քննադատել սուլթանի խօսքերը չի կարող: Այնուհետև Սոլսբըրին խօսեց եւրոպական պետութիւնների համախմբման մասին և նկատեց. «Ինչ էլ որ կատարուելու լինի, պէտք է կատարուի ընդհանուր համաձայնութեամբ»: Դրանից յետոյ մարքիզը ցաւ յայտնեց Թուստեմ-փաշայի հիւանդութեան առթիւ և մեծ գովասանքով խօսեց նրա, իբրև Լիբանանի նահանգապետի, գործունէութեան մասին: «Եթէ Ռուստեմ-փաշայի նման մարդիկ կառավարէին Հայաստանը, Եւրոպան երբէք ցնցուած չէր լինիլ այդ երկրում կատարուած սարսափեցուցիչ անցքերից: Եթէ Ռուստեմի նման մարդիկ շրջապատէին սուլթանին, այն ժամանակ անհրաժեշտ չէր լինիլ, որ պետութիւնների կողմից ճնշումն գործուէր: Պէտք է նկատել, որ հայկական կնճռի լուծումը կախուած է նոյնքան յարմարաւոր մարդկանցից, որքան և արդար օրէնքներից: Նոր կարգադրութիւնների լոկ հրըատարակումը չի կարող փոխարինել ընդունակ նահանգապետներին»: Ի վերջոյ պրեմիերն ասաց. «Պետութիւնները բոլոր կարելի եղածը կ'անեն, բայց խորը արմատներ ձգած չարիքը չի կարող չքանալ իբրև մի մոգական գաւազանի զօրութեամբ»:

Երեկոյեան վախճանուեց Թրքական դեսպան Ռուստեմ-փաշան:

«Daily News»-ը հաղորդում է, որ Գոլոխովսկին առաջարկել է՝ բոլոր պետութիւնների նաւատորմիղները կեդրոնացնել Բեզիկի ծովախորշի մէջ. բռնի կերպով անցնել Դարդանել. հարկաւոր դիպուածում մտնել Մարմարայ ծովը և մինչև անգամ գրաւել Կ. Պոլիսը: Այդ առաջարկները Ռուսիան վրճռապէս մերժել է, Ֆրանսիան հետևել է Ռուսիայի օրինակին, Գերմանիան Աւստրիա-Ունգարիային անորոշ պատասխան է տուել:

—

ՀՌՈՄ 9 Նոյեմբերի. — Իտալական նաւատորմիղը Զմիւռնիա հասաւ:

—

ՅԱՏՈՒԿ ՀԵՌԱԳՐՆԵՐ ԷՐԶՐՈՒՄԻ ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ

—

Թիֆլիս լրագրութիւնը իտալացի Միշել Լանձանիից (իտալական «Tribuna» կիսապաշտօնական թերթի յատուկ թղթակցից) Էրզրումից, Կարաւուրդանի վայով, ստացել է անցեալ հոկտեմբերի վերջերին հետևեալ հեռագրները, իր խոստման համաձայն, որ հրատարակում ենք միայն այժմ.

Էրէկոյեան:

Շաբաթ, հոկտ. 18-ին, ժամը 12-ին սկսուեց հայոց կոտորածը: Զինուորները սկսեցին հրաձանաձգութիւնը, իսկ թուրք ամբոխը, ինչպէս վայրենի գազան, յարձակուեցաւ հայերի վրայ: Բազմաթիւ տներ կողոպտեցին և աւերեցին: Այն տների տէրերը, որոնք անձնասուր չէին լինում և պաշտպանում էին, նրանց տները հրդեհ ձգեցին: Կոտորածը տևեց 6 ժամ: Յայտնի չէ կոտորածների թիւը. կողոպտումը չարունակւում էր ամբողջ օրը: Մի քանի անգամ հրացանները արձակեցին անգլիական և իտալական հիւպատոսարանների վրայ և ինքս էլ ենթարկուեցայ զեղակահարութեան:

Բոլոր հիւպատոսարանները պաշտպանում էին յատուկ ուղարկուած պահապան զօրքերով: Մեր պատուհաններից տեսնում էինք, թէ ինչպէս հենց այդ զինուորները կողոպտում էին փախչող հայերին:

Գիշերը:

Կոտորածը և աւերումը չարունակւում է. տանից դուրս գալը անկարելի է: Փիւրդի հագուստով դուրս եկայ պիտելու: Հայց բազարը (չուկան) այլևս գոյութիւն չունի, բոլորովին կողոպտուած է. բացի այդ, տասը տուն միայն է ձգուած, իսկ չատ տներ կողոպտուած են: Կարծում են, որ 500 սպանուած և նոյնքան էլ վիրաւորուածներ կան:

Երէկոյեան:

Հոկտ. 19-ին: Կոտորածը վերջացաւ. կողոպտումը չարունակւում է: Հիւպատոսարանները զէնք պահում են զինուորներին: Քաղաքը գերեզմանատան էերպարանք է ստացել: Փողոցներում բացի իրրև կարգապահ կանգնեցուած զինուորներից (պատրուլ) և կողոպտուած աւարը փախցնող թուրքերից՝ ոչ ոք չէ երևում:

Գիշերը:

«Պահապան զինուորները այսօր սպանեցին դարձեալ 3 հայ: Քաղաքից դէպի Մուշ տանող ղրան մօտ չարունակւում է կողոպուտը:

Երէկոյեան:

Հոկտ. 20-ին: Վալին, հիւպատոսների հարցմունքին պատասխանելով, ասում է, որ կոտորուածների և վիրաւորուածների թիւը հասնում է 60 հոգու, իսկ իմ հաշուով 1000-ից աւելի սպանուած են և 600-ի չափ վիրաւորուած»:

Գիշերը:

Սպանուածների մարմինները հաւաքեցին և տարան մասամբ բողոքականների և մասամբ հայոց գերեզմանատները: Շատերի մարմինները դեռ չեն քերուած, աւելի չատերը թափուած են թրքաց գերեզմանատան մօտ, ուրիշ չատերի մարմինները թագցրել են թուրքերը. չատերին են ձգել ջուրը, մի քանի աղջիկներ են փախցրել:

Երէկոյեան:

Հոկտ. 21-ին: Ոչ մի հայ չէ համարձակւում տանից դուրս գալ: Քաղաքի փողոցները հոկտ. զինուորները (պատրուլ) փոխանակ խաղաղացնելու ժողովրդին, աւելի ահ մէջ են գցում: Վիրաւորուածները վանքում (առաջնորդարան) են տեղաւորուած: Մանր վիրաւորուածները մեռնում են: Այսօր վերջապէս թոյլ տուին սպանուածներին թաղելու մասին մի գուբի մէջ: Սպանուածների մէջ տեսայ երեք քահանայի դիակ վայրենաբար կտրտուած:

Գիշերը:

«Տեղի ունեցած կոտորածների մէջ ին կառավարութիւնը ըստ երևոյթին աշխատեց մեղմացնել հայոց օգտին և կարող էր պաշտպանել հայերին, բայց ընդհակառակն զօրքերն իրենց բարբարոսութեամբ գերազանցեցին թուրք ամբոխին: Երբ հիւպատոսները այդ մասին դիմումներ արին, վալին բանտարկեց մի քանի զինուորներ, որոնք սպանած և կողոպտած էին հայերին, բայց նրանց չուտով արձակեցին:

Երէկոյեան:

Հոկտ. 22-ին: Էրզրումի մօտ 6 գիւղ կրակի է մատնուած. յայտնի չէ գիւղերում կոտորածը որչափ է. գիւղերում սարսափը մեծ է: Նրանց պաշտպանութեան համար կառավարութիւնը զօրք չուղարկեց: Ստացուած հեռագրներից իմացւում է, որ ամբողջ Հայաստանում կոտորած կայ՝ Մուշում, Վանում, Բիթլիսում, սպանուածների թիւը այս չաբաթ միքանի հարիւրի է հասնում:

Գիշերը:

Անգլիական հիւպատոսը հետամուտ է սպանուածների թիւը իմանալու: Ինչ պէս նախկին հեռագրով յայտնել եմ, սպանուածների թիւը 1000-ից աւելի է. ես ինքս մինչև 600 դիակ համարեցի, մնացածը խիստ չատ էր. չատերի մարմինները թագցրած են:

Գիշերը:

Տակաւին Հայաստանում տեղի ունեցած կոտորածների մանրամասնութիւնները պակասում են: Բաղէշում (Բիթլիս) մեծ կոտորած կայ, չատերն են սպանուած, չատ գիւղեր աւերուած. ամեն օր ջարդ կայ այս կամ այն գիւղում. հայերը ամեն տեղ մերկ և անօթի են մնացած: Այստեղ արդէն ձիւն է գալիս:

—

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ

(«Նոր-Դար»-ի Պարիզի թղթակցից)

—

Այս րոպէիս ամբողջ Եւրոպան, թէ կառավարութիւն և թէ ժողովուրդ, յուզուած վիճակի մէջ է: Անատուգութեան սարսուռի զգացումը բոլորի սըրտին և մտքին տիրել է: Արևելեան խնդիրը, դիւանագէտների այդ մղձաւանջը, նորից քաղաքական հորիզոնի վրայ բարձրանալու նշաններ է ցոյց տալիս: Սակայն այդ երևումը այս անգամ աւելի ահարկու պիտի լինի իւր ընդհանուր հետևանքներով, քան առաջին անգամները, եթէ մի զօրեղ ձեռք չկտտէ քաղաքական գործերի զսպանակը, իրերն

Ինչպես հայտնի է, Նիկոմիդիայի գավառում գտնվող Ֆաուլ-Ղուլ գյուղի մոտ հայտնաբերվել է հնագույն մի գերեզմանոց, որի մասին մենք արդեն հաղորդել էինք մեր նախորդ համարներից մեկում։ Այդ գերեզմանոցում գտնվել են մեծ քանակությամբ հնագույն դրամներ, որոնք, ինչպես հայտնի է, մեծ հետաքրքրություն են ներկայացնում հնագիտության համար։ Այդ դրամների մասին «Ազգ»-ը ստացել է հետևյալ հետաքրքրական տեղեկությունները։

Ֆաուլ-Ղուլ գյուղի մոտ գտնվող հնագույն գերեզմանոցում հայտնաբերված դրամների թիվը հասնում է 400-ից մինչև 500 հատի։ Դրանք հիմնականում արծաթյա են և «Gaulois»-ի խմբագրությունը ստացել է դրանցից 200 հատ։ Դրամների մեծ մասը հին է, մաշված, և դրանց վրա գրվածքները հազիվ են երևում։ Դրամների մի մասի վրա կարելի է կարդալ հունական տառեր, իսկ մյուսների վրա ոչ մի գրություն չկա։ Դրամների մեծ մասը ունի մոտ 2 սանտիմետր տրամագիծ։

Դրամների հայտնաբերման մասին «Gaulois»-ի թղթակիցը հարցրել է Ֆաուլ-Ղուլ գյուղի ղեկավարներից մեկին, որը հետևյալ տեղեկությունները է հաղորդել։

«Մեր գյուղի մոտ գտնվող հնագույն գերեզմանոցում հայտնաբերված դրամների մասին մենք հաղորդել էինք մեր նախորդ համարներից մեկում։ Այդ գերեզմանոցում գտնվել են մեծ քանակությամբ հնագույն դրամներ, որոնք, ինչպես հայտնի է, մեծ հետաքրքրություն են ներկայացնում հնագիտության համար։ Այդ դրամների

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՊԱՐՈՆ Ա. ԲԱՐԱՆՈՎԻՉ,

(Նոր-Վոլ-ի թղթակցից)։

Պատմեն, որ Ռուսիոյ մէջ ամէն տարի 60—70 հ։ մարդ կը սպանուի եւ վիրաւորուի 3 անգամ աւելի։ Սպանողներուն մեծ մասը կը բռնուի եւ կը դատուի։ Ասոնց մէջ կան նաեւ կանայք։ Ամէնէն ծանր դատուածները կը դատապարտուին ցմահ աքսորի։ Ասոնք կը ղրկուին Սիպիրիա, ուր կը մնան մինչեւ իրենց մահը

քուէարկութիւնը և կառավարութեան առաջարկութիւնը ընդունուեցաւ 270 ձայնով ընդդէմ 234-ի։

Ձայների այդ փոքրիկ առաւելութիւնը, որով կառավարութիւնը յաղթող դուրս եկաւ, պատկանում էր յեղափոխականներին (արքայականներին, աջ.)։

Ընկերավարականները այդ քուէն սկիզբն համարեցին քաղաքական պատերազմի։

Կարմօյի գործաւորները, այդ լուրը առնելով, անվրդով կերպով վճռեցին ընդդիմանալ՝ ամենայն տեղ։

Պ. Ռիսսեգիէն, որ անձամբ ներկայ էր վիճաբանութեան, ներքին գործերի մինիստրի թախանձանօք հետեւել օրը յայտարարեց, որ չորրորդ «հնոցը» պիտի վառէ, որով գործաւորները աշխատելու տեղ կունենան, եթէ ուզեն մտնել։

Սակայն այդ օրից ի վեր, չնայելով այդ յաղթութեան, ոչ ոք չէր կարծում, որ Ռիբօյի պատահական յեղափոխական կաբինէտը կարող էր երկար ժամանակ գոյութիւն ունենալ։

Ռիբօյի մինիստրութիւնը ցոյց տուեց, որ իւր գոյութիւնը կախումն ունի միայն արքայականներից, ուրեմն իւր դէմ են ամբողջ ձախ-յառաջադիմականները, ձախը (արմատականները) և ծայրագոյն ձախը (ընկերավարականները)։

Հասարակապետական մինիստրութեան գոյութիւնը իւր բուն առանցքից չրջուած, այլ մէջն էր գտնուում։ Իրերի այդ դրութիւնը մեծ զայրացուցը պատճառեց նոյն իսկ չափաւոր հասարակապետականների (կեդրոնի) բանակի մէջ։ Ուստի Ռիբօյի մինիստրութիւնն ընկաւ։

5 նոյեմբ. (ն. տ.)։

Գ. Լէոն Բուրժուան, նոր մինիստրութեան գլուխ անցնելուց յետոյ, անմիջապէս հեռագիր ուղարկեց Կարմօյի գաւառապետին, որ ձեռնարկէ իրաւարարութիւն կազմակերպելու, ըստ 1894-ի օրինաց, Կարմօյի գործաւորների պ. Ռիսսեգիէի մէջ։ Գործաւորները, որոնք նախապէս յանկութիւն էին յայտնել պատրաստականութեամբ հետեւել իրաւարարի որոշման, չտապալ են իրենց միջից մի քանի հոգի ընտրել՝ իրաւընթաց լինելու համար, սակայն պ. Ռիսսեգիէն մինչև ցարդ ուղղակի մերժում է ոչնչ իրաւարարութիւն ընդունել։ Եթէ պ. Ռիսսեգիէն յապաղէ իւր ընթացքի մէջ, բնական է որ սկզբունքի մեծ ընդհարումն կարող է տեղի ունենալ։

Անհատական սեպհականութիւնը պէտք է յարգել, և օրէնքը, պետութիւնն այժմ նպատակ ունին անհատական սեպհականութեան գոյութիւնը ապահովել, իսկ եթէ այդ անհատական սեպհականութիւնը չարիքների աղբիւր է դառնում և հարիւրաւորների թշուառութեան պատճառ, այն ժամանակ պետութիւնը պարտականութիւն ունի այլապէս միջամտելու, քան պարզ իրաւարարութեան առաջարկութեամբ։

Տնտեսագիտական այդ կնճռոտ, բայց պարզ սկզբունքի լուծումը չատ հետաքրքիր պիտի լինի։ Անհատ իւր անհատական սեպհականութեամբ իրաւունք ունի արդեօք ուրիշին վնասել, մահացնել, որովհետև ինքը բացարձակ տէր է մի սեպհականութեան, որ իրօք իրենը չէ։

Ս. Սապահ-Գիւլեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ԹԻՒՐՔԻԱ

—

Մահուան անկողնի մէջ պառկած հոգեսպառ «իւանդ»-ի պատմական ժառանգներից մէկն էլ Յունաստանն է։

Յունաստանը, չնորհիւ ֆրանսիական լիազօր ներկայացուցիչ պ. Վատինգտոնի, կարողացաւ իւր ձայնը լսել տալ Բերլինի վեհաժողովում, և այսօր Յունաստանը իւր պահանջներն ունի։ Նա էլ իւր «անփրկելի Յունաստանը» ունի, որին չի կարող մոռանալ Եպիւռոսի սահմանագծումը։ Դա ևս լիովին վերջացած չէ, իսկ Եպիւռոս Յունական-Մակեդոնական և Կրետէի խնդիրները դեռ բաց են։ Հայկական չարժման վերջին դէպքերը առանց հետևանքի չէին կարող մնալ, ի թիւս այլոց, և յունական ժողովրդի վրայ։ Ահա թէ այդ մասին ինչ է գրում «Le Temps»-ի Աթէնքի թղթակիցը։ «Քաղաքական շրջանների մտահոգութեան առարկաներից մէկն էլ այն է, որ լուր կայ, թէ Դիւանը իւր նախկին ինքնավարութիւնը կրտայ Կրետէին և օսմանեան կայսրութեան մէջ եղող յոյներին կընորհէ նոյն բարենորոգումները, որոնք չնորհուած են արդէն հայերին...

Մակեդոնական յուզումը երկար ժամանակից ի վեր Յունաստանը ազմուկի մէջ է դրել, իսկ հայկական յուզումը չարունակում է ճարակել և հելլենական երկրները։ Դիւանը այդ տեսնում է։ Ուստի նա ճիգ է թափում դէպի իրեն չահել յոյների համակրանքը։ Իսկ այդ դժուար չէ, ինչպէս որ արդէն մի քանի անգամ հաղորդել եմ։ Յունաստանը Դիւանից չէ խնդրում սահմանագծի ուղղումն, և ոչ էլ բացառական արտօնութիւններ «անփրկելի Հելլէնների համար»։ Նա ժամանակ առ ժամանակ յիշեցնում է, որ կրետական քարտը (charte), որ մի երկկողմեան պայմանագրութեան արդիւնաբար էր՝ Եւրոպայի երաշխաւորութեան տակ, միայն օրէնք չդնելուցաւ Իւան կողմից, որ եպիւռոսցիները միշտ սպասում են, որ Բերլինի վեհաժողովի որոշած բարենորոգումները գործադրուին և որ Փանարի արտօնութիւնները նոյնպէս չեն յարգւում, որպէս զի միակ լինէը ըստ համաձայնութեան յարաբերութեանց Դիւանի և տիեզերական պատրիարքի։ Դիւանը աչխատում է այդ վիճաբանութիւնը հեռացնել։ Բայց երկիւղալի չէ, որ եպիւռոսցիները և կրետացիները խառնուեն դիւանագիտական այդ գրուցագրութեան մէջ, որ արդէն տարիներից ի վեր տևում է Աթէնքի և Կ. Պոլսի մէջ։ Կրետէի մէջ տաժանիկ յուզումն է տիրում, իսկ Եպիւռոսում դոհ չեն։ Եպիւռոսի ժողովուրդը բաւականանում է իւր դժգոհութիւնը յայտնել ժամանակ առ ժամանակ յօդուածներ հրատարակելով Աթէնքի թերթերի մէջ։ Կրետէի մէջ սկսում են համախմբումներ կազմել, որ թէև ոչ ազմկարար, սակայն պակաս վտանգալից չեն հասարակական խաղաղութեան համար։ Շնորհիւ հելլենական կառավարութեան յորդորանաց, դեռ ևս հրազէնների փոխանակումն տեղի ունեցած չէ ցուցարարների և թուրք զօրքերի մէջ, սակայն այդ կարող է պատահել մի առ նակնունելի ժամանակ, որով վտանգի կենթարկուի Աւելէքի խաղաղութիւնը։ Ուստի Թուրքերը բազմապատկում են իրենց խոստումները և բարելից վարմունքը։ Բայց այդ բաւական չէ այսօր։ Վաւերականութիւն է պէտք։ Իսկ այդ վաւերականութիւնը պիտի լինի վերահաստատել կրետական ազատութիւնը, և Եպիւռոսի մէջ և՛ս գործադրել այն բարենորոգումները, որ Եւրոպան ստացաւ հայերի համար։ Ինձ ասացին, որ նոյն իսկ երէկ թրքական մինիստրը բանակցութիւններ է սկսել այս ուղղութեամբ։ Այդ ինձ կասկածելից է թւում, թէև դրութիւնը պահանջում է, որ Թիւրքիան այժմ աւելի քան երբէք մօտենայ Յունաստանին։

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳՐՆԵՐ *)

—

ՊԱՐԻԶ, 10 նոյեմբերի.— Մինիստրների խորհրդում արտաքին գործերի մինիստրը յայտարարեց, որ թրքական գործերի մասին ստացուած տեղեկութիւնները բոլորովին էլ վրդովեցուցիչ չեն։ Տէրութիւնների միջև եղած համաձայնութիւնը մանրամասնօրէն հաստատուում է։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ԻՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՒԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ.

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 9 նոյեմբերի.— Բիւլետեն. Նոյեմբերի 8-ից. Թագաւոր Կայսրուհին ամբողջ գիշերը քնած էր հանգիստ։ Ինքնազգացողութիւնը և առողջութիւնը կանոնաւոր է։ Բարձր Նորածնի անունը և զարգացումը կատարւում է կատարելապէս կանոնաւոր կերպով։

Բժշկական զեկուցումները յայտարարում է, որ Պետերբուրգում նոյեմբերի 4-ից մինչև 7-ը խոլերայով հիւանդացել են 5 հոգի, վեցին—6, եօթին —4 (?)։

ՍՈՖԻԱ.—Թագաւոր Կայսրը հաճել է խիստ ողորմածաբար պատասխանել Կորուբրի պրինց Ֆերդինանդի Մեծ Իշխանուհի Օլգա Նիկոլաևնայի ծնունդեան առթիւ ուղարկած չնորհաւորական հեռագրին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 նոյեմբերի — Բիւլետեն նոյեմբեր 9-ից Նորին Մեծութեան առողջական վիճակի մասին. Նախորդ օրուայ ընթացքում փոփոխութիւն եղած չէ։ Ինքնազգացողութիւնը առաջուայ նման լաւ է։ Բարձր Նորածինն ևս զուարթ և առողջ է։

*) Այդ հեռագիրը ստացուած է երէկ երեկոյեան ուշ ժամանակ։ Խմբ.

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄԵՆԱՑԱՑՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ

ԴՈՒԵՏՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒԿ ՆԵՐ

ՖԻՍ-ՀԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻԹԱՌՆԵՐ, ՁԱՆՁՑԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁՈՑՆԱԹԱՋԵՐ, ԼԱՐԵՐ ԵՒ ԱՑԼՆ ԵՒ ԱՑԼՆ



բոլոր տեսակ գործիքների համար դիմը կարելի է վճարել մաս-մաս,

ՆՈՐ-ՊՐԻՑՍԿՈՒՐԱՆՏՆԵՐ
ուղարկում են չէք

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՁԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
Դ Ե Պ Օ
Բ. Մ. ՄՐԻՄԱՆԵԱՆԻ
Մասնակարար Կայսերական երաժշտական Ընկերութեան
Музыкальное депо Б. М. Мириманяна Тифлисъ Дворцовая ул.
652 30—16

(Մ.) 7—3.

ԳՆԵՑԵՔ ՄԻԱՑՆ
ԱՏԱՄԻ ՏԻՄԱԼԵԱՆ ԷԼԷՔՍԻՐ և ԱՏԱՄԻ ՏԻՄԱԼԵԱՆ ՓՈՇԻ
Ընթացուած են չէքսը և պահպանած են ապոհէքը
Ս. Պ. Բ. ՏԵԽՆՈ-ԽԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
Գլխաւոր պահեստները—С. ПЕТЕРБУРГЪ, Александр. площ. 9. МОСКВА, ВАРШАВА.

Открыта подписка на 1896 г.
на ТРИ изданія:

I.
ЕЖЕДНЕВНАЯ ГАЗЕТА
НОВОСТИ ДНЯ
— 25-Й ГОДЪ ИЗДАНІЯ —

Газета отводитъ на своихъ столбцахъ мѣсто всему выдающемуся русской жизни, отмѣчая событія въ возможной полнотѣ и яркой, живой общедоступной формѣ.

Помимо обширной мѣстной хроники, въ „НОВОСТЯХЪ ДНЯ“ помѣщаются ежедневно многочисленныя телеграфныя сообщенія и корреспонденціи отъ собственныхъ корреспондентовъ изъ ПЕТЕРБУРГА, изъ провинціи и крупнѣйшихъ заграничныхъ центровъ—изъ ПАРИЖА, БЕРЛИНА, ЛОНДОНА и друг. Ежедневно помѣщается беллетристическій фельетонъ.

Желая, кромѣ того, дать читателямъ иллюстраціи къ тому богатому матеріалу, который помѣщается въ ежедневной газетѣ „НОВОСТИ ДНЯ“, редакція, благодаря постоянно возрастающему успѣху газеты, нашла возможнымъ дать

всѣмъ своимъ подписчикамъ БЕЗПЛАТНО
ДРУГОЕ СВОЕ ИЗДАНІЕ—ЕЖЕНЕДѢЛЬНЫЙ ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЖУРНАЛЪ
— „СЕМЬЯ“. —

Въ 1896 г., въ виду предстоящаго Священнаго Коронованія ИХЪ ИМПЕРАОРТСКИХЪ ВЕЛИЧЕСТВЪ, „СЕМЬЯ“ дастъ на своихъ страницахъ цѣлый рядъ оригнальныхъ рисунковъ, относящихся къ этому знаменательному событію.

Въ будущемъ-же году предстоитъ открытіе всероссійской художественно-промышленной выставки въ Нижнемъ-Новгородѣ. „СЕМЬЯ“ посвятитъ выставкѣ рядъ своихъ номеровъ, и наряду съ описаніемъ будетъ помѣщать альбомъ рисуиковъ и иллюстрацій по всѣмъ отдѣламъ будущей выставки.

Для ознакомленія съ журналомъ „СЕМЬЯ“ можетъ быть выланъ любой номеръ его БЕЗПЛАТНО.

Подписная цѣна на „Новости Дня“ вмѣстѣ съ еженедѣльнымъ журналомъ „Семья“ въ годъ 10 р., на шесть мѣсяцевъ 5 р. 50 к., на три мѣсяца 3 р., на одинъ мѣсяцъ 1 р. Въ Москвѣ въ годъ 8 р.

II.
ЕЖЕНЕДѢЛЬНЫЙ ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЖУРНАЛЪ
СЕМЬЯ
IV годъ изданія.
3 р. ПОДПИСНАЯ ЦѢНА ВЪ ГОДЪ 3 р.

III.
ЕЖЕМѢСЯЧНЫЙ ЖУРНАЛЪ
НОВОСТИ ИНОСТРАННЫЙ ЛИТЕРАТУРЫ
VI годъ изданія.

Выходитъ ежемѣсячными книжками и даетъ въ русскомъ переводѣ лучшія произве денія иностранныхъ писателей: французскихъ, нѣмецкихъ, англійскихъ, итальянскихъ, шведскихъ и пр.

ПОДПИСНАЯ ЦѢНА въ годъ 3 р., съ журналомъ „СЕМЬЯ“ 5 р., вмѣстѣ всѣ три изданія 13 р.

Адресъ: Главная контора газеты „Новости Дня“ и журналовъ „Семья“ и „Новости иностран. литературы“: Москва, Красныя ворота, соб. домъ.
Издатель *А. Липскеровъ*.

(Ф.) 3—3.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լազարեան ճեմարան բեւեռեան լեզուաց Մոսկուա.

Հանդուցեալ Պետական Խորհրդական
Դ. Ն. Ի. Է. Գ. Բ. Ի. Է. Լ. Ե. Ա. Ն Ք. Ա. Ն. Ա. Ն. Ե. Ա. Ն Ի
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՅԱՏԱՏՈՒԱԾ ՄՐՑԱՆԱԿԻ ՆԻՒԹԸ.

«Հայերը Բիւզանդիայում՝ մինչեւ Յուստինիանոսի արշաւանքը» (մինչեւ Բիւզանդական աղբիւրների համաը)։

Շարադրութիւնը կարող է ներկայացուել Հայերէն, Ռուսերէն, Ֆրանսերէն կամ Գերմաներէն։

Շարադրութիւնը պէտք է ներկայացուի ոչ ուշ քան 1-ն յունուարի 1898 թ.։

Լաւագոյն շարադրութիւնը լիշեալ նիւթի մասին կը պարգեւատրուի Խորհրդարանի կողմից *եօթն հարիւր րուբլի մրցանակով*։

Վերատեսուչ ճեմարանի՝ Գ. Քաջունի
Քարտուղար Խորհրդարանի Գ. Խալաթեանց.

(Խմբ.) 3—2.

ԱՐԴԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ Է ՅԱՆՁՆՈՒԱԾ ԵՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ ԼՈՅՍ ԿՐՏԵՍՆԻ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱԼԽԱՍԵԱՆ
„ԵՐԴՈՒՄ“
Վ. Է. Պ
Գինն է 40 կոպ.

Յանկացողները կարող են դիմել. Թիֆլիս. «Նոր-Դար»-ի խմբագրատուն, Յով. Մալխասեան

Тифлисъ Дозв. Цензурою 10-го Ноября 1895 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. А. О. Меликъ-Шахназаріанца Воронц. Набережн. Церковный домъ